ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«12» օգոստոսի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ երիտասարդներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ:

Երիտասարդների ստեղծագործ մտածողությունը, առաջադեմ նախաձեռնություններն ու նորարար գաղափարները միշտ էլ եղել և շարունակում են մնալ համայնքի առաջընթացի հիմնական շարժիչ ուժը:

Սիրելի երիտասարդներ, Ստեփանավանի համայնքապետարանը բարձր է գնահատում ձեր դերը և մշտապես պատրաստ է աջակցել ձեր գաղափարների իրագործմանը:

Այսօր համայնքում իրականացվում են ծրագրեր, որոնք միտված են երիտասարդների ակտիվությանը՝ սկսած կրթական ու մասնագիտական նախաձեռնություններից մինչև համայնքային ենթակառուցվածքների բարելավում:

Մենք շարունակելու ենք կառուցել հնարավորությունների միջավայր, որտեղ յուրաքանչյուր երիտասարդ կարող է ինքնադրսևորվել, կայանալ և իր նպաստը բերել Ստեփանավանի կայուն զարգացմանը:

Մաղթում եմ ձեզ առողջություն, հաստատակամություն և հետևողականություն ձեր նախաձեռնություններում:

Շարունակեք լինել ակտիվ, պատասխանատու և համայնքի նկատմամբ հոգատար քաղաքացիներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ